

**ՇԱԽՄԱՏԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ՇԱԽՄԱՏ» ԱՌԱՐԿԱՅԻ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԳՐՔԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՈՒՄ**

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍԱՄՎԵԼ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող,
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու

Էլ. հասցե՝ samvelmanukyana@gmail.com

ՄՈՎՍԻՍՅԱՆ ՆԱԻՐԱ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, միջազգային
գրոսմայստեր

Էլ. հասցե՝ abovyanchess@gmail.com

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆՈՒՆԵ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, սոցիոլոգիայի
մագիստրոս

Էլ. հասցե՝ gevorgyannune37@aspu.am

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԻԼԻԹ,

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի կրտսեր գիտաշխատող, շախմատի
ուսուցիչ

Էլ. հասցե՝ gevorgyanlilit@aspu.am

DOI: 10.24234/scientific.v2i45.99

ԱՄՓՈՓՈՒՄ

Հետազոտությունն ընդգրկել է մանկավարժական բարձր որակներով և շախմատ առարկայի գիտելիքների բարձր մակարդակով օժտված ուսուցիչների փորձագիտական գնահատման գործընթացը: Բացահայտվել են «Շախմատ» հանրակրթական առարկայի գործող դասագրքի բարդ թեմաները, թեմաների անհիմն կրկնությունները, ուսուցանվող նյութերի անհամաչափ, ոչ աստիճանական զարգացումը:

Կարևոր է ընդգծել, որ նախորդ տարիներին իրականացված մի շարք հետազոտություններում ևս հեղինակներին հետաքրքրել են դասագրքերի բովանդակությանը, կազմման չափանիշներին վերաբերող հարցերը: Այդ հետազոտություններից մեկի շրջանակներում հեղինակները վերլուծել են «Մայրենի», «Մաթեմատիկա» և «Շախմատ» առարկաների դասագրքերը և ուսուցչի ձեռնարկները՝ վեր հանելով այն որակներն ու կարողությունները, որոնց ձևավորմանն ուղղված է այդ առարկաների բովանդակությունը, ինչպես նաև՝ թե ինչպիսի համամասնությամբ են դրանք ձևավորվում (յուրաքանչյուր առարկայի ազդեցության գործոնը) (Sargsyan, et al., 2021):

Այդ ամենը հաշվի առնելով՝ մշակվել է «Շախմատ 3» դասագիրքը, բեռնաթափվել են թեմաները, կրճատվել է դասերի ծավալն ու քանակը, ներմուծվել են նոր թեմաներ:

Քանալի բառեր՝ դասագիրք, գնահատման օբյեկտիվ գիտական մեթոդ, թեմայի ընկալում, նորմատիվային բարդություն, մեթոդական և բովանդակային թերություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի մեթոդական խմբի և Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների շախմատի ուսուցիչների համագործակցության արդյունքում պարզվել է, որ ՀՀ դպրոցներում շախմատի 3-րդ դասարանի կիրառվող դասագիրքը (Թումանյան, 2018) աշակերտների մեծամասնության ընկալման տեսակետից բարդ է:

Դիտարկումները ցույց են տվել, որ որոշ խնդիրներ դժվար են նույնիսկ շախմատի ուսուցիչների համար: Այդ պատճառով անհրաժեշտություն էր առաջացել

օբյեկտիվ գիտական մեթոդով գնահատել 3-րդ դասարանի շախմատի դասագրքի բարդությունը, և գնահատման արդյունքների հիման վրա որոշում կայացնել այդ դասագրքի որակի բարելավման կամ նոր դասագրքի մշակման վերաբերյալ:

Աշխատանքի նպատակն էր գնահատել շախմատի 3-րդ դասարանի դասագրքի բարդության աստիճանը և գնահատման արդյունքներով որոշում կայացնել այն մասին, թե արդյոք անհրաժեշտ է խմբագրել գործող դասագիրքը, թե՛ մշակել նոր դասագիրք:

Գնահատման արդյունքում ստացվել է, որ այդ դասագրքի բոլոր՝ 24 գլուխների բարդության աստիճանն ավելի բարձր է, քան բարդության նորմատիվային մակարդակը, որը գնահատվել է շախմատի փորձառու ուսուցիչների փորձագիտական գնահատականների հիման վրա:

Ստացված արդյունքների հիման վրա որոշվել է մշակել նոր դասագիրք:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ենթադրենք, ունենք մանկավարժական բարձր որակներով և շախմատ առարկայի գիտելիքների բարձր մակարդակ ունեցող փորձառու ուսուցիչ: Հիմնվելով իր փորձին և մասնագիտական գիտելիքներին՝ ուսուցիչը գիտի, որ առարկայի թեմաներն ունեն բարդության տարբեր աստիճաններ: Իր փորձից նա գիտի նաև, որ, որպես կանոն, իրատեսական չէ պահանջել, որ դասարանի աշակերտներն ամբողջովին յուրացնեն բոլոր թեմաները:

Ուսուցիչն ունակ է պատասխանելու այն հարցին, թե աշակերտների տվյալ քանակ ունեցող դասարանում աշակերտներից **մոտավորապես** քանիսն են բավարար յուրացնում տվյալ թեման: Նշանակենք այդ թիվը՝ A-ով:

Ուսուցիչն ունակ է նաև իր համար սահմանելու, թե աշակերտների տվյալ քանակով դասարանում **մոտավորապես** քանի աշակերտի կողմից տվյալ թեմայի բավարար ընկալման դեպքում նա կհամարի, որ դասարանում այդ թեմայի ուսուցման հարցում հասել է բավարար արդյունքի: Նշանակենք այդ թիվը՝ B-ով:

Վերը նշված ենթադրությունների համախմբության դեպքում՝ $C = B/A$ հարաբերությունը ցույց կտա տվյալ ուսուցչի կարծիքով թեմայի բարդության աստիճանը աշակերտների համար:

Եթե $C = 1$, ապա նշանակում է, որ մասնագիտական բարձր որակներով օժտված ուսուցիչը տվյալ թեմայի դեպքում միջինացված դասարանում ունակ է հասնելու իր կողմից սահմանած բավարար արդյունքի: $C = 1$ արժեքն անվանենք թեմայի *նորմատիվային բարդություն*:


Եթե $C < 1$, ապա ենթադրություն, որ թեման յուրացնում են ավելի քիչ քանակով աշակերտներ, քան անհրաժեշտ է դասարանում բավարար արդյունք գրանցելու համար: Այսինքն՝ թեման նորմատիվայինից ավելի բարդ է:

Եթե $C > 1$, ապա ակնառու է, որ թեման յուրացնում են ավելի շատ քանակով աշակերտներ, քան անհրաժեշտ է դասարանում բավարար արդյունք գրանցելու համար: Այսինքն՝ թեման նորմատիվայինից պակաս բարդ է:

Շախմատի դասագրքի բարդության գնահատման ներկայացված մոտեցումն իրականացվել է փորձագիտական գնահատականների միջոցով: Փորձագիտական հարցումը սոցիոլոգիական հարցման տեսակ է, որտեղ ռեսպոնդենտների դերում հանդես է գալիս մարդկանց հատուկ տիպ՝ փորձագետներ(*Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն*, 2022): Որպես փորձագետներ են սահմանվել Հայաստանի բոլոր մարզերի շախմատի լավագույն ուսուցիչները: «Փորձագետ-ուսուցիչներին» ընտրել են Հայաստանի շախմատի ակադեմիայի «Շախմատ» առարկան համակարգող մարզային պատասխանատուները, որոնք առավել օբյեկտիվ են գնահատում իրենց մարզերի շախմատի ուսուցիչների մասնագիտական որակները:

Փորձագետ-ուսուցիչների ընտրանքը տրված է Գծապատկեր 1-ում: Նրանց ընդհանուր քանակը 101 էր:

Դասագրքի բարդության գնահատման համար փորձագետ-ուսուցիչների ընդգրկումը լուծում է գնահատման համար կարևորագույն խնդիր՝ **հնարավորինս նվազեցնում է գնահատականում ուսուցչի ցածր որակավորման ազդեցությունը**:



Գծապատկեր 1. Դասագրքի բարդությունը գնահատող փորձագետ-ուսուցիչների քանակն ըստ մարզերի

Գնահատման համար փորձագետ-ուսուցիչներին են ներկայացվել շախմատի 3-րդ դասարանի դասագրքի բոլոր 24 թեմաները:

Յուրաքանչյուր թեմայի բարդության C գնահատականը հաշվելու համար անհրաժեշտ A և B թվերը ստանալու համար փորձագետ-ուսուցիչներին է ներկայացվել գնահատվող թեմաների ցանկը և յուրաքանչյուր թեմայի համար տրվել են հետևյալ առաջադրանքները.

- «Գրե՛ք խնդրեմ, թե միջին հաշվով քանի աշակերտ է լինում Ձեր 3-րդ դասարանում» (սահմանում է հաջորդ երկու հարցերի համար կողմնորոշիչ թիվը):
- «Ձեր նշած թվով աշակերտներից կազմված դասարանում մոտավորապես քանի՞ աշակերտ է կարողանում բավարար չափով յուրացնել աղյուսակում տրված յուրաքանչյուր թեման» (B):
- «Ձեր նշած թվով աշակերտներից կազմված դասարանում եթե բավարար չափով յուրացնեն թեման, ապա աշակերտներից մոտավորապես քանիսի՞ յուրացրածը կհամարեք, որ դասարանի համար այդ արդյունքը, ընդհանուր առմամբ, «բավարար» է» (A):

Գնահատվել է նաև յուրաքանչյուր թեմայի համար անհրաժեշտ ժամերի օպտիմալ քանակը հետևյալ հարցի միջոցով.

- «Ձեր կարծիքով քանի՞ ժամ արժե տրամադրել թեմային»:

Մեր հետաքրքրության կիզակետում է 24 թեմաներից յուրաքանչյուր բարդության՝ C-ի միջին արժեքը փորձագետ-ուսուցիչների ընտրանքում:

- Եթե այն **վիճակագրորեն նշանակալի** չի տարբերվում 1-ից, ապա տվյալ թեման ուսուցիչների գնահատականներով, ընդհանուր առմամբ **համապատասխանում է** ներկայիս 3-րդ դասարանցիների ունակություններին և ուսուցիչների ակնկալիքներին: Անվանենք այն **նորմատիվային բարդություն**:
- Եթե այն **վիճակագրորեն նշանակալի** չափով ավելի մեծ է 1-ից, ապա թեման «բարդ» է, և հարկ է դիտարկել այն պարզեցնելու հարցը:
- Եթե այն **վիճակագրորեն նշանակալի** չափով ավելի փոքր է 1-ից, ապա խնդիրը «հեշտ» է և մասնագետները կարող են կայացնել համապատասխան որոշում: Չի բացառվում, որ այն անհրաժեշտ լինի «բարդացնել», օրինակ՝ ավելի բարդ խնդիր-տրամադրերի միջոցով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձագետ-ուսուցիչների վերը նշված հարցերի հավաքագրված պատասխանները վերլուծվել են SPSS 20 համակարգչային փաթեթով (Մանուկյան, 2022): Գնահատելու համար արդյոք թեմայի բարդության C մետրիկայի արժեքը վիճակագրորեն հավաստի տարբերվո՞ւմ է 1-ից, կիրառվել է մեկ ընտրանքով t-տեստը: Վիճակագրական փորձարկման արդյունքները տրված են *Աղյուսակ 1*-ում:

Աղյուսակում տրված են գնահատվող թեմաները («Թեմայի անունը» սյուն), թեմայի բարդության գնահատման ընտրանքի ծավալը («N» սյուն, դրանք փոքր են 101-ից, քանի որ ոչ բոլոր փորձագետ-ուսուցիչներն են տվել բոլոր պահանջվող գնահատականները), թեմայի բարդության գնահատականները («Թեմայի բարդությունը՝ C» սյուն), t-տեստի բնութագրիչները, այդ թվում՝ t չափանիշի արժեքը, t չափանիշի հաշվարկում կիրառված թվային տվյալների ազատության աստիճանը (կիրառված t-տեստի դեպքում այն հավասար է N-1), տեստի վիճակագրական հավաստիությունը («Sig. (2-tailed)»), թեմայի բարդության և 1 թվի միջև տարբերությունների միջին արժեքները («Mean Diff.»), թեմաների բարդության C գնահատականների հավաստիության միջակայքերը՝ 0.95 հավանականությամբ: Աղյուսակի վերջին սյունում տրված են ուսուցիչների գնահատականները

յուրաքանչյուր թեմային հատկացվող օպտիմալ ժամաքանակների: Տրված են այդ գնահատականների միջինացված արժեքները:

Աղյուսակում թեմաները տրված են ըստ դրանց բարդության գնահատականի նվազման: Հիմնական արդյունքները պարունակող սյուների տվյալները տրված են մուգ կարմիր գույնով:

Թեմայի անունը	N	Թեմայի բարդությունը՝ C	One-Sample Test : Test Value = 1						Ժամերի քանակ
			t	df	Sig. (2-tailed)	Mean Diff.	95% CI of the Diff.		
							Lower	Upper	
1. Նյութական առավելության իրացում. փիղ և եգրային (նավակի) զինվոր	94	1.613	4.671	93	0.000	0.613	0.352	0.874	2.00
2. Հինվորային վերջնախաղեր. քայլի հերթականության կարևորությունը սատարման դաշտերը գրավելու համար	95	1.502	6.398	94	0.000	0.502	0.346	0.657	2.00
3. Նյութական առավելության իրացում	94	1.499	5.936	93	0.000	0.499	0.332	0.666	2.00
	95	1.488	7.042	94	0.000	0.488	0.350	0.626	3.00
4. Թագուհին զինվորի դեմ			2			8	0		
5. Նյութական առավելության իրացում. շախմատի ոգին	94	1.486	5.628	93	0.000	0.486	0.315	0.658	2.00
6. Երկքայլանի մատային խնդիր-գլուխկոտրուկներ	94	1.461	5.207	93	0.000	0.461	0.285	0.637	2.00
7. Խուսափում պատից	96	1.460	6.115	95	0.000	0.460	0.311	0.610	2.00
						0			
8. Հինվորային վերջնախաղեր. զինվորների մրցավազք	97	1.459	4.942	96	0.000	0.459	0.275	0.644	2.00
9. Երկքայլանի մատային խնդիրներ	97	1.441	2.837	96	0.006	0.441	0.132	0.749	2.00
10. Սխալի ուղղում	94	1.439	5.196	93	0.000	0.439	0.271	0.607	2.00
11. Դիրքերի համեմատում	95	1.425	5.746	94	0.000	0.425	0.278	0.571	2.00
12. Հինվորային վերջնախաղեր. կրկնակի սպառնալիք արքայով	94	1.410	6.068	93	0.000	0.410	0.276	0.544	2.00

13. Պաշտպանություն մատից	97	1.402	7.36 7	96	0.00 0	0.402	0.293	0.510	3.00
14. Մատ երկու քայլից	96	1.397	6.98 1	95	0.00 0	0.397	0.284	0.510	2.00
15. Զինվորային վերջնախաղեր. սատարման դաշտեր	97	1.373	4.95 2	96	0.00 0	0.373	0.223	0.522	2.00
16. Բաց հարձակման նախապատրաստում	97	1.360	7.131	96	0.00 0	0.36 0	0.260	0.460	3.00
17. Մատ երկու փղով	96	1.352	6.94 4	95	0.00 0	0.352	0.251	0.452	2.00
18. Նյութական առավելություն և որակ	95	1.288	4.521	94	0.00 0	0.288	0.161	0.414	1.00
19. Զինվորային վերջնախաղեր. քառակուսու կանոնը	97	1.273	7.20 4	96	0.00 0	0.273	0.198	0.349	2.00
20. Մատային դիրքերի ստեղծում	97	1.257	6.85 2	96	0.00 0	0.257	0.182	0.331	2.00
21. Գլուխկոտրուկներ	96	1.236	4.35 5	95	0.00 0	0.236	0.128	0.343	2.00
22. Սկզբնախաղ	96	1.231	8.02 9	95	0.00 0	0.231	0.174	0.289	3.00
23. Շախմատի աշխարհի չեմպիոններ	95	1.230	2.76 7	94	0.00 7	0.230	0.06 5	0.394	2.00
24. Խաղի գրանցում	96	1.166	5.143	95	0.00 0	0.166	0.102	0.230	2.00

*Աղյուսակ 1. Դասագրքի բաղադրիչների վիճակագրական գնահատման արդյունքները:
Կիրառված է մեկ ընտրանքի t-տեստը, գնահատվել են միջինների արժեքների
տարբերությունները 1-ից:*

Աղյուսակից երևում է, որ թեմաների բարդության գնահատականների վիճակագրական հավաստիության գնահատականները փոքր են 0.05-ից, այսինքն՝ բոլոր 24 թեմաները, վիճակագրորեն հավաստի, ունեն նորմատիվայինից ավելի բարձր բարդություն:

Թեմաների գնահատականների կոտորակային մասերը ցույց են տալիս, թե քանի տոկոսով է յուրաքանչյուր թեմայի բարդությունն ավելի մեծ այդ թեմայի նորմատիվային բարդությունից:

ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Փորձագիտական հարցման ընթացքում փորձագետ-ուսուցիչներից հավաքագրվել են նաև դիտողություններ, մեկնաբանություններ և առաջարկներ այն մասին, թե՝

- Ի՞նչ թեմաներ կցանկանայիք տեսնել դասագրքում, որոնք ներկայիս դասագրքում բացակայում են:
- Աշխատելիս բովանդակային ի՞նչ դժվարություններ է առաջացնում աշակերտների համար 3-րդ դասարանի շախմատի դասագիրքը: Պատասխաններում նշվել են յուրաքանչյուր խնդրի էջն ու պարբերությունը:
- Արդյոք դասագրքում կա՞ն տեքստեր, սահմանումներ, տերմիններ, հասկացություններ կամ բառեր, որոնք անհասկանալի են 3-րդ դասարանի աշակերտների համար:

Դժվարություն առաջացնող յուրաքանչյուր կետի համար նշվել է, թե դասագրքի տեքստի ո՞ր էջում և ո՞ր պարբերությունում է այն:

Հավաքագրված որակական տվյալները համակարգվել են, դասակարգվել և ներկայացվել «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի մեթոդական խմբին՝ կիրառելու համար գործող դասագրքի խմբագրման կամ նոր դասագրքի մշակման աշխատանքներում, որը մշակել է նոր դասագիրք (Թումանյան, Մովսիսյան, 2022):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փորձարկման արդյունքները ցույց տվեցին, որ 3-րդ դասարանի շախմատի գործող դասագրքի գնահատված բոլոր՝ 24 թեմաներն ավելի բարդ են, քան անհրաժեշտ է, որ Հայաստանի բարձր որակավորմամբ շախմատի ուսուցիչները առարկայի դասավանդման ընթացքում հասնեն իրենց ակնկալած բավարար արդյունքին:
2. Գնահատման արդյունքների հիման վրա կայացվել է գիտականորեն հիմնավորված որոշում՝ մշակել 3-րդ դասարանի շախմատ առարկայի համար նոր դասագիրք:
3. Շախմատի 3-րդ դասարանի դասագրքի բարդության գնահատման մշակված մեթոդաբանությունը կիրառելի է ցանկացած առարկայի ցանկացած դասարանի դասագրքի բարդության գնահատման դեպքում:

4. Որակական արդյունքների ընդհանրացումը հանգեցրեց այն եզրակացության, որ Շախմատի 3-րդ դասարանի նոր դասագրքի մշակման խմբում պարտադիր պետք է ընդգրկել տարրական դասարաններում դասավանդող փորձառու մանկավարժներ, լեզվաբաններ:
5. Ստացված եզրակացությունը հուշում է, որ լեզվաբան մասնագետի առկայությունը հայերեն ցանկացած դասագրքի հեղինակային կազմում պարտադիր է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Թումանյան Հ. Տ.** (2018). *Շախմատ: Դասագիրք հիմնական դպրոցի 3-րդ դասարանի համար*. Երևան, «Զանգակ»:
- Թումանյան Հ.Տ., Մովսիսյան Ն.Ն.** (2022). *Շախմատ: Դասագիրք հիմնական դպրոցի 3-րդ դասարանի համար*. Երևան, «Զանգակ»:
- Մանուկյան Ս.** (2022). *IBM SPSS Statistica 20 բազային դասընթաց, Տեսամեթոդական ձեռնարկ*. Երևան. <https://www.ibm.com/support/spss-statistics>, *Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ). Փորձագետներ*. (2022). <https://www.anqa.am/>
- Sargsyan V. Zh., et al.** (2021). The Connection of Chess Knowledge With the Indicators of Progress in Mathematics and Native Language in Primary Schools. *ASPU SCIENTIFIC NEWS*, 3(41), 98. <https://aspu.am/chessjournal/30.12.2021.pdf>

REFERENCE LIST

- Tumanyan H. T.** (2018). *Shahmaty. Uchebnik dlya 3 klassa nachal'noj shkoly (Chess: Textbook for the Third Grade of Primary School)*. Erevan "Zangak".
- Tumanyan H.T., Movsisyan N.N.** (2022). *SHahmaty. Uchebnik dlya 3 klassa nachal'noj shkoly (Chess: Textbook for the Third Grade of Primary School)*. Erevan, "Zangak".

- Manukyan S.** (2022). Bazovyy kurs IBM SPSS Statistica 20(20 *Basic Courses of IBM SPSS Statistica*), Video metodicheskoe posobie. Erevan. <https://www.ibm.com/support/spss-statistika>
- Nacional'nyj centr obespecheniya kachestva professional'nogo obrazovaniya (*National Center for Quality Assurance of Professional Education*)(NKC). Eksperty. (2022). <https://www.anqa.am/>
- Sargsyan V. Zh., et al.** (2021). The Connection of Chess Knowledge With the Indicators of Progress in Mathematics and Native Language in Primary Schools. *ASPU SCIENTIFIC NEWS*, 3(41), 98. <https://aspu.am/chessjournal/30.12.2021.pdf>

РЕЗЮМЕ

ОЦЕНКА СЛОЖНОСТИ УЧЕБНИКА ДЛЯ ТРЕТЬЕГО КЛАССА ПО ПРЕДМЕТУ "ШАХМАТЫ"

САМВЕЛ МАНУКЯН, НАИРА МОВСИСЯН, НУНЕ ГЕВОРГЯН, ЛИЛИТ ГЕВОРГЯН

Исследование включало в себя процесс экспертной оценки учителей с высокими педагогическими качествами и высоким уровнем знаний предмета шахмат. Выявлены сложные темы действующего учебника по общеобразовательному предмету «Шахматы», необоснованные повторения тем, непропорциональное, непоследовательное освоение изучаемого материала.

Важно подчеркнуть, что в ряде исследований, проведенных в предыдущие годы, авторов также интересовали вопросы, связанные с содержанием учебников и стандартами составления. В рамках одного из таких исследований авторы проанализировали учебники и методические пособия по предметам Родина, Математика и Шахматы, выделив качества и способности, на формирование которых направлено содержание этих предметов, а также пропорцию, в которой они формируются (импакт-фактор каждого предмета) (Sargsyan, et al., 2021).

С учетом всего этого учебник «Шахматы 3» был переработан, темы разгружены, объем и количество уроков уменьшены, введены новые темы.

Ключевые слова: учебник, объективный научный метод оценивания, понимание темы, методологические и содержательные недостатки.

ABSTRACT

THE ASSESSMENT OF COMPLEXITY OF THE THIRD GRADE CHESS TEXTBOOK *MANUKYAN SAMVEL, MOVSISYAN NAIRA, GEVORGYAN NUNE, GEVORGYAN LILIT*

The research included the process of expert evaluation of teachers with high pedagogical qualities and knowledge of Chess. The complex topics, unnecessary repetitions of the material, disproportionate, non-gradual development of taught materials of the current textbook were revealed.

It is important to emphasize that in several researches, carried out in previous years, the authors were also interested in the issues related to the content of textbooks and the compilation standards. Within the framework of one of these studies, the authors analyzed the textbooks and teacher's manuals of the subjects of Native Language, Mathematics and Chess, highlighting the qualities and abilities, which are formed with the help of the contents of the mentioned subjects, as well as the proportion in which they are formed (the impact factor of each subject) (Sargsyan, et al., 2021).

Considering all this, the Chess 3textbook was re-edited, the topics were simplified, the volume and the number of the lessons were reduced, and new topics were introduced.

Key words: textbook, objective scientific method of evaluation, understanding of the topic, methodological and content deficiencies.

Հոդվածը ստացվել է՝ 03.05.2023

Հոդվածը ուղարկվել է գրախոսման՝ 10.05.2023

Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 25.07.2023